Ի սմին ժամանակի Ծագեցաւ վէճ և խռովութիւն 'ի մէջ Ցունաց և Լատինաց վասն դերեզմանի Ս. Աստուածածնի՝ 'ի ձորն Դեթսէմանի, զի Յոյնք երկնէին հանապազ 'ի միտս իւրեանց կերպիւ իւիք արտաքսել յեկեղեցւոյ անտի զԼատինս՝ և 'ի զայրանալ կռուոյն՝ Փոխանորդք եւ Թարգմանք երկուց ազգաց դիմեցին առ դատաւոր քաղաքին, և նա արար ատեան մեծ յերեւելեաց քաղաքին, ուր եկին և դասք դիտնականացն այլազգեաց։ Եւ 'ի լինել բանից՝ ամբաստան եղեն Յոյնք զԼատինաց եւ ասեն՝ 'ի դարուց և 'ի ժամանակաց անտի դերեզմանն Ս. Աստուածածնի սեփհական է Ցունաց, և նոքա միայն տիրեալ են այնմ առանց ուրուք ընդդիմանալոյ, այժմ Լատինք յարուցեալ հակառակին ընդ մեզ վասն այնր, ուստի խնդրեմք բառնալ զընդդիմութիւնս նոցա։ Ցակնարկել դատաւորին՝ ետ պատասխանի Փոխանորդն Լատինաց և ասէ. եկեղեցին այն որոշեալ և սահմանեալ է երից ազգաց՝ Հայոց, Ցունաց և Լատինաց, և իւրաքանչիւր ազգ ունի անդ առանձին տեղիս, և մէն մի սպասաւորս, և որոշեալ ժամանակս կատարելոյ զպաշտամունս, մաքրելոյ և լուցանելոյ զկանթեղս, և սեփհականեալ է այն երից ազգաց, և ոչ միոյ ազգի. և Փոխանորդն Ցունաց Անանիա ոչ անսայր բանից նորա։ Հարկ եղեւ դատաւորին հարցանել ցժողովեալ այլազգիս, և նոքա զնոյն ետուն պատասխանի՝ թէ եկեղեցին սեփհական է երից ազգաց։ Դատաւորն ազգարար Փոխանորդին Ցունաց լուել յամբաստանութենէ և չկալ հակառակ նախնի սովորութեան. կոչեաց նաեւ ընդ Թարգմանն Հայոց և պատուիրեաց նմա չկռուիլ ընդ միմեանս, այլ կալ մնալ անդ որպէս էին յառաջագոյն՝ յիւրաքանչիւր սահմանեալ տեղիս, եւ սիրով կատարել զպաշտամունս իւրեանց, և այսպիսի եղանակաւ արձակեաց զատեանն. ՌՃՌ (1754)։

Հանդեաւ 'ի Կոստանդինուպոլիս Ակնցի մահտեսի Սեղբոս Ամիրայն, մեծ բարերարն Ամոռայն Երուսաղէմի, յերեկոյի յաւուր տօնի Իսահակայ Պարթեւի Հայրապետին, (1754. 'ի 5 Փետրվար ամսոյ)։

Իսկ Լատինք թէպէտեւ լռութեամբ մեկնեցան յատենէ դատաւորին, այլ ոչ կամեցան խոսիլ հանդարտիլ.